քային խորհրդի անդամները, դպրոցական աւագագոյն վարչութիւնը, ուսուցիչները, ծաղիկ խնամող օրիորդաց դասատուները, և հարիւրի չափ հայրեր, մայրեր և լուսաւորութեան բարեկամներն։ Տեղեկատուն իւր բացման ճառով ցոյց տուեց ծաղիկների կանոնաւոր խնամքի դաստիարակչական նշանակութիւնը, շնորհակալութիւն յայտնեց գործին նպաստողներին և վերջապէս այն աշակերտուհիների անունները կարդաց, որոնք որ մրցանակով պատուեցան։—Այսպէս անսովոր ցուցահանդէսը խիստ բազմաթիւ այցելողներ ունեցաւ։ Ոչ միայն տեղական քաղաքացիք, այլ և շրջակայ գիւղերից անթիւ յաճախորդներ եկան և իւրեանց զարմացումն ու խնդութիւնը արտայայտեցին պայծառերանգ տեսարանի մասին, որ իրանց առջև բացվում էր, երբ որ մտնում էին մարզարանը։ Ցուցահանդիսի միջնակէտը կազմում էր իւրեանց իշխանապետի կիսարձանը՝ շրջապատուած սեննեկազարդ շքեղ բոյսերով և ծաղկի կողովներով, որ ընկերութիւնը ձօնել էր իբրև ընծայ մրցանակի համար։ Այս միջնակէտի շուրջ դասաւորած էին սպիտակ սփռոցով ծածկուած երկար սեղանների վերայ 141 խնամուած տունկերը։ Նոցանից շատերը աչքի էին ընկնում ծաղկած հոյակապութեամբ. միւսները, ինչպէս զոր օր. coleus—տեսակները, հիացնում էին իրանց տերևների բարգաւաճութեամբ, խոշորութեամբ և երփներանգութեամբ. իսկ ամէնքը հրապուրիչ էին սպիտակ և կանաչ ներկած ձողերով, գունաւոր և ճաշակով զարդարուած մետաքսակերպ թղթերի փաթեթներով և այն անծածուկ փութով, որով իւրաքանչիւր փոքրագոյն ճիւղն անգամ կարգաւորած և պնդացրած էր։

Ցուցահանդիսի վերջը աշակերտուհիները դասարան դասարան յետ տարան իրանց խընամած բոյսերը։ Սոքա այսուհետև նոցա սեփականութիւն են։ Մրցանակի արժանացած աշակերտուհիները տարան բացի ընծաներից նաև մի նկարակերտ գովասանական վկայագիր, որ պատրաստեց մանկավարժական ժողովը։ Այս վկայագրերը այժմ անշուշտ որպէս պատի զարդ տներում պատուաւոր տեղ են բռնում և իրանց տէրերին երկար ժամանակ, թերևս մինչև ծերութեան օրերը, կը յիշեցնեն անմեղ և արտաշահ մանկութեան ուրախութիւնները։—

Այս մանրամասն տեղեկութիւնները հանելով „Pädagogische Studien“ պարբերական թերթից, կը ցանկանայինք ընթերցողների ուշադրութիւնը դարձնել, թէ ինչպիսի փոքր միջոցներով կարելի է մանուկներին և ծնողներին մեծ ուրախութիւն պատճառել, և եթէ դպրոցասիրութիւնը կենդանի է մի համայնքի մէջ, այնտեղ ամենափոքր անդամն անգամ, զոր օր. մի պարտիզպան, աւելի մեծ աւագների միախորհուրդ գործակցութեամբ, ինչպէս կարողանում է մի բարի գործ վախճանին հասուցանել և օրհնութիւն տարածել շատ և շատ ընտանիքներում։

Ս. Մ.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ.

Սեպտ. 18—30-ին վախճանեցաւ Լայպցիգի համալսարանի սենիոր (ուսուցչապետական ակումբի աւագ անդամ), փիլիսոփայութեան ուսուցչապետ Վիլհելմ Դրոբիշ, 94 տարեկան հասակում: Հանգուցեալը հերբարտական ուղղութեան գլխաւոր սիւներից մէկն է եղել եւ իւր կեանքի խնդիր դարձրել է ընդարձակել եւ տարածել Հերբարտի ուսումը: 1824 թ.-ին սկսելով իւր դասախօսութիւնները Լայպցիգում, ուր եւ ծնել ու ուսել էր, նա մինչեւ վերջն էլ մնաց այդտեղ եւ շարունակեց իւր ուսուցչական գործունէութիւնը մինչեւ 1886 թ.-ը, հրատարակելով միաժամանակ մի շարք յայտնի գրուածքներ հոգեբանութեան եւ փիլիսոփայութեան միւս ճիւղերին վերաբերեալ: Կրօնի փիլիսոփայութեան մասին կարդացած իւր դասախօսութիւնների համար նա ստացել էր նաեւ աստուածաբանութեան դոկտորի պատւոյ տիտղոսը:

Ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն կ ր թ ա կ ա ն շ ա ր ժ ո ւ մ Ա ն գ լ ի ա յ ո ւ մ: Բացի համալսարաններից, յաճախ տեղի ունեցող հրապարակական դասախօսութիւններից, Անգլիայում վերջին տարիներս աւելացան բազմաթիւ կրթական հաստատութիւններ հասարակ ժողովրդի դաստիարակութեան համար: Ռ ե ջ ե ն տ—Ս տ ր ի տ ի բազմարուեստեան դպրոցը 11000 անդամ ունի: Այս կրթական մեծ հաստատութիւնը հիմնուած է շնորհիւ մի միլիոնատիրոջ առատաձեռնութեան եւ գտնուում է Լոնդոնի համեմատաբար հարուստ մի թաղում: Սրանից չորս տարի առաջ Բորօու—Րօդում, հարաւային Լոնդոնի աղքատ դասակարգի համար հիմնուած է նոր բազմարուեստեան դպրոց, իշխանութեան եւ մասնաւոր նախաձեռնողների ջանքերի շնորհիւ: Տասը տարի առաջ հարաւային Լոնդոնի լուսաւորուած բնակիչները կազմեցին մի մասնաժողով, որի նպատակն էր 1500 բանուորի համար հիմնել ժողովրդական բազմարուեստեան դպրոց: Միջոցներ

գտնելու համար մասնաժողովը դիմեց ամենից առաջ բարեգործութեան մինչորդներին, որոնց կառավարութիւնը յանձնում է զանազան նուիրաբերութիւններ Մինչորդները խոստացան մասնաժողովին 150,000 ֆիտ. ստ. այն պայմանով, որ հասարակութիւնն էլ իւր համակրանաց իբրեւ ապացոյց ստորագրութեամբ հաւաքէ նոյնպիսի մի գումար: Երկու տարուայ մէջ պահանջուած գումարն արդէն պատրաստ էր. նուիրատուութիւններ ստացուում էին ամեն կողմից. մի անյայտ մարդ միանուագ ստորագրեց 20,000 ֆիտ. ստ.: 1891 թ. մասնաժողովի մօտ պատրաստ էր 500,000 ֆիտ. ստ., որով իսկոյն ձեռնարկեց բազմարուեստեան դպրոցի շինութիւնը: Կառավարութիւնն անմիջապէս օգնութեան հասաւ, եւ Լոնդոնի քաղաքագլխական խորհուրդը նուիրեց 16,000 ֆիտ. ստ. ժողովրդական կրթական հաստատութիւնների պէտքերի համար: Բորոու-Բոդի բազմարուեստեան դպրոցն ստացաւ կառավարութիւնից տարեկան 25,000 ֆիտ. ստ. օժանդակութիւն, որով նրա գոյութիւնը միանգամայն ապահովուած է: Այստեղ եւս, ինչպէս նաեւ ուրիշ ձեռնարկութիւնների մէջ, Անգլիական կառավարութիւնն այն ժամանակ միայն օգնութեան հասաւ, երբ գործն արդէն սկսուած էր եւ հարկաւոր էր միայն պահպանել:

Ռուսաց լեզուի ուսուցումը Ֆրանսիայում: — Երկու տարուց ի վեր Փարիզի գիմնազիոններից շատերի մէջ աւանդուում է Ռուսաց լեզուն. իսկ Լիլլի համալսարանում կայ մինչեւ իսկ առանձին ամբիոն ռուսաց մատենագրութեան համար: Սակայն բոլոր ջանքերը ցարդ շատ շնչին արդիւնք են տալիս. ծնողներն աւելի օգտակար են համարում իրանց զաւակներին անգլիերէն կամ գերմաներէն սովորցնել, եւ գիմնազիական ծրագրի մէջ այդ լեզուներից մէկի ուսուցումը պարտադիր է. մինչդեռ ռուսաց լեզուի դասերը կամաւոր են, ինչպէս երաժշտութեան եւ այլ գեղարուեստների դասերը:

Հայկական խնդրագիր: — Անգլիացի կանայք պատրաստում են մի հայկական խնդրագիր Վիկտորիա թագուհուն ներկայացնելու համար, որպէս զի արգելուի ափիոնի եւ ոգելից ըմպելիների վաճառումը: Խնդրագիրը գրուած է 44 լեզուներով եւ պէտք է կրէ 7,000,000 ստորագրութիւն, Բրիտանական կայսրութեան բոլոր մասերի կանանց կողմից: Ստորագրութիւններ ժողովում է Կանանց մնչազգային համաժողովը, որի նպատակն է մաքառել արբեցութեան դէմ:

Sydney քաղաքի համալսարանի քիմիայի պրոֆեսսոր Liverside մի կարգ ճիշդ հետազօտութիւններով հաստատեց, որ ծովի ջուրը New South Voles'-ի ափերի մօտ պարունակում է ½-ից մինչեւ 1 գրան ոսկի մի տոննի մէջ, որ կազմում է իւրաքանչիւր խորանարդ մոտն ջրի մէջ 150-ից մինչեւ 260 տոննի թանկագին մետաղ: Եթէ ընդունենք բոլոր ովկիանոսների միջի ջրի քանակութիւնը 400 միլիոն խորանարդ մոտն, եւ թէ ոսկին հաւասարապէս է զետեղուած մի մի գրան իւրաքանչիւր տոննի ջրի մէջ, այն ժամանակ պէտք է եզրակացնել, որ ոսկու ընդհանուր քանակութիւնը ծովերի մէջ հասնում է մի անագին թուանշանի — 400,000,000,000, (հարիւր հազար միլիոն) տոննի:

ԱԶԳԱՅԻՆ

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

Ամսոյս 21-ին, Նորին կայսերական Մեծութեան գահակալութեան երկրորդ տարեդարձի օրը, Նորին Վեհափառութիւնը Երեւանից շնորհաւորական հեռագիր ուղղեց Պետերբուրգ, որին ի պատասխան ստացուեցաւ հետեւեալ հեռագիրը Ցարսկոյէ Սէլոյից.

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ.

Շնորհ ունիմ առ Ձերդ Վեհափառութիւն վասն շնորհաւորութեան և վերառաքեալ աղօթից Ձերոց և հօտին Ձերոյ յաւուր երկրորդ տարեդարձի ամբառնալոյ Մերոյ ի գահ նախնեաց:

ՆԻԿՈԼԱՑ

Նորին Վեհափառութեան հեռագիրն ուներ հետեւեալ բովանդակութիւնը.—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ.

Ի սին մեծահանդէս աւուր երկրորդ տարեդարձի ամբառնալոյ Ձերդ Մեծութեան ի փառաւոր գահ նախնեացդ, ես ընդ հոգեւորական դասու իմոյ և համայն հօտին Հայոց՝ աղօթելով վասն քաջառողջութեան և բարօրութեան Ձերդ Մեծութեան, մատուցանեմ զանձնուէր շնորհաւորութիւնս և մաղթեմ ի վերայ Ձեր, խաղաղասէր Աքայ, և ի վերայ համայն Օգոստափառ Ցանդ՝ դաստուածայինն օրհնութիւն: Փառապանծ և վեհաշուք ուղևորութիւն Ձերդ Մեծութեան ընդ Եւրոպա լիցի զօրավիգն մեծագոյն և խաղաղ յառաջադիմութեան հզօր Ռուսաստանի:

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.